Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

ԹԵՄԱ՝ Շեքսպիրի «Համլետ»-ի ուսուցման բարոյադաստիարակչական նշանակությունը

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Մհեր Եղոյան

ԽՈՒՄԲ՝ Հ. լեզու և գրականություն

ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լիլիթ Մարկոսյան

2022 թ.

Եղեգնաձոր

Շեքսպիրի «Համլետ»-ի ուսուցման բարոյադաստիարակչական նշանակությունը

«Գրականության աստված», «Խոշորագույն դրամատուրգ», «Սոնետների արքա», «Աշխարհի հրաշալիքներից մեկը», - ահա ինչպես է մարդկությունը գնահատել իր լավագույն հանճարներից մեկին՝ Վիլյամ Շեքսպիրին: Նա այսօր էլ շարունակում է հմայել ու գերել մարդկանց նորանոր սերունդներ: Եվ որքան ավելի է զարգանում աշխարհը, այնքան ավելի է կարողանում մարդը թափանցել շեքսպիրյան ստեղծագործության անծայրածիր խորքերը:

Համաշխարհային գրականության ոչ մի ստեղծագործություն չի առաջացրել այնքան տարբեր մեկնաբանություններ և հակասական կարծիքներ, որքան Շեքսպիրի «Համլետ» ողբերգությունը: Համլետը համայն մարդկության ամենասիրված գրական կերպարներից է և ունի բարոյադաստիարակչական մեծ նշանակություն: Աշխարհի չարիքների դեմ ըմբոստացած երիտասարդ իշխանը մարտահրավեր է նետում ստոր ու դաժան շրջապատին՝ քաջ գիտակցելով, որ այդ անհավասար պայքարում հաղթելը մարդկային ուժերից վեր է : Նա իր անձնական վշտի ու ցնցման ժամին կարողանում է սթափ գիտակցել, որ աշխարհի չարը չի սահմանափակվում միայն իր՝ Համլետի ողբերգությամբ: «Լինել, թե չլինել» հայտնի մենախոսության մեջ նա խարազանում է աշխարհի արատավորությունը և թվարկում այն բոլոր վշտերը և խոցերը, որոնք տանջում են մարդկությանը:

Երկի հիմնական գաղափարը կարծես թե յուրօրինակ պատգամ է, իսկ պատգամները չեն հնանում և ունենում են արդիական հնչեղություն իրենց օգտակարության գործառույթներով: Այս հատկանիշները պայմանավորված են մեկը մյուսով՝ լրացնելով իրար, իսկ օգտակարությունը գեղարվեստական գրականությունը դիտարկում է բարոյական տեսանկյունից՝ ակնկալելով գործնական ազդեցություն ընթերցողի վրա, որը կխթանի ընթերցանությանը (դարձել է հրատապ հարցերից մեկը):

Ցանկացած մարդուն, պատանուն ևս նախևառաջ հուզում են իր անձը, անհատական ապրումները, նպատակները, ցանկությունները և այլ հոգեվիճակներ, այսինքն ինչու՞ է նա երբեմն տխուր, երբեմն հուսալքված ու չարացած, ինչպե՞ս է սիրում, ինչու՞ է սիրում...հոգեվիճակներ, որ բնորոշ են ցանկացած դեռահասի: Եվ ելակետ դարձնելով պատանուն՝ ներկայացնել, որ նա ապրում իր կյանքով, ունի

նպատակ ու դժվարություններ, փորձում է հասկանալ ինքն իրեն ու իր կողքին ապրող մարդկանց: Առաջարկել, որ բացահայտի իրեն «Համլետ»-ի միջոցով, որսի նրա մտքի թռիչքը և դրանից կենսական, ինչու չէ, նաև գործնական հետևություններ կարող է անել իր համար այս կյանքում, որովհետև ներկայի հետ ունեցած սերտ կապը վեր հանելը, մատնանշելն ավելի կարևոր է, քան երկն ինքնին՝որպես հեղինակի հանճարի դրսևորում: Չէ որ աշակերտներին առավել հուզում է ներկան, և նրանք ավելի լավ պատկերացնում են ժամանակակից կյանքը: Նրանց այս ճանաչողությունը կարելի է օգտագործել՝ անցյալն ու ներկան համեմատելու, ներկայի համար անցյալից արժեքավոր հետևություններ անելու համար: Անցյալի ողբերգությունների, սխալների ու արատավոր երևույթների բացահայտումն ու քննադատությունը մեզ զերծ կպահի նույնը կրկնելուց:

Դասի կառուցվածքը

1. Հիմնական հասկացություններ	1. Ինքնություն 2. Հաղորդակցում 3. Ստեղծարարություն
2. Ենթահասկացություններ	1. Վերաբերմունք 2. Բանավոր հաղորդակցում 3. Կապակցված խոսք
3. Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ	1. Ժամանակ և տարածություն 2. Անհատ և հարաբերություն
4. Ձևավորվող կարողունակություններ	1. Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն 2. Սովորել սովորելու կարողունակություն 3. Միջառարկայական կապեր, երաժշտություն, թատրոն, ֆիլմ, ասմունք
5. Նպատակը	Առարկայական 1. Բնութագրել գլխավոր հերոսին 2. Ցույց տալ հերոսների տարբերությունները 3. Գեղեցիկ ասմունքել /մենախոսություն և ընտրած հատվածները/ և գրագետ ընթերցում 4. Կազմել խոսք որևէ հատվածի շուրջ

6. Կարողություններ	1. Բնութագրել մարդուն, գնահատել նրա արարքները և դրանց հետևանքները 2. Վերլուծական կարողությունների զարգացում 3. Բանավոր խոսքով լսարան պահելու կարողություն
7. Սովորողի նկարագիր և դիրքորոշում	1. Արդարության համար պայքարող հերոսի կերպար 2. Հուսահատված սերնդին ոգորելու և ոգևորելու հնարավորության ընձեռում 3. Իսկական ընկերության կարևորություն 4. Վրեժխնդրության բարդության ընկալում
8. Վերջնարդյունքներ	1. Բնութագրել և համեմատել հերոսներին 2. Մատնանշել հերոսների արտաքին բացասական հետևանքները 3. Ձևակերպել հարցադրում և գտնել պատճառները հիմնավորումներով
9. Կիրառվող մեթոդներ	1. Հակիրճ դասախոսություն 2. Վեց գլխարկ 3. Պատկերասրահ 4. Քառաբաժան 5. Յոթ կադր 6. Ճամտրուկ
10. Իմաստավորում	1. Լրացնել համապատասխան հարցաթերթիկ բացահայտելու Համլետի կերպարը /կրթություն. բնավորության գծեր …/ 2. Գրել նամակ Համլետին 3. Հարցերի պատասխանները հիմնավորել գրագետ ընտրված հատվածներով և գեղեցիկ ասմունքով

11. Կշռադատում	1. Հասկանու՞մ ես Համլետին 2. Մեկնել վրեժխնդրությունը 3. Բառային աշխատանք. Առանձնացնել «Դամոն» հասկացությունը 4. Լրացնել հոմանիշային շարքերը ըստ ստեղծագործության
12. Ամփոփում	1 Ի՞նչ է սովորեցնում մեզ այս ստեղծագործությունը 2. Ժամանակի և տարածության մեջ փնտրել Համլետին 3. Մեկնել նրա վրեժխնդրության հիմնական առաքելությունը 4. Տալ ընդհանրություններ

«Համլետ»-ը մեզ հնարավորություն է տալիս բացահայտելու մարդուն, նրա էությունը, տեսակը, խառնվածքը և այլն, որ մարդ անհատականութուն է դառնում այն դեպքում, երբ նրանում միաժամանակ գործում են և՛ բարոյականը, և՛ գիտականը, և՛ գեղեցիկը: Կան այնպիսի դրվագներ, դեպքեր, արտահայտություններ ու խոսքեր, որոնք այժմեական են: Խոսքերի և արտահայտությունների մի մասը կարող է մեզ համար դառնալ կյանքի ուղեցույց, որը ունի ուսուցման բարոյադաստիարակչական նշանակություն: Լի է աֆորիզմներով, ճշմարիտ դիտարկումներով, սրամտություններով ու հեգնանքով:

Ընկղմվելով Շեքսպիրի ողբերգության իրադարձություններում, մենք տեսնում ենք բազմակողմանի զարգացած գլխավոր հերոս: Համլետը ոչ միայն ուժեղ կրքերով մարդ է, այլև բարձր ինտելեկտի տեր, որը խորհում է կյանքի իմաստի մասին, չարիքի դեմ պայքարի ուղիների և գիտակցում է, որ «մարդը, գեղեցկությունն է տիեզերքի՝ պսակը ամեն կենդանի բանի»: Բայց երկու հակադիր մղումներ՝ զգայականը և բանականը, գործում են արտաքին տարանջատության մեջ, իսկ մարդը պետք է ամբողջական դառնա և ընկալվի իր իսկ կողմից: Որտեղ էլ երևում է, որ մարդը մարդ է, երբ ունի իր սեփական արժանապատվության զգացումը, և որ դա նրա մարդ մնալու ամենակարևոր հատկություններից մեկն է: Բայց դրա համար, նախ և առաջ, նա պետք է գիտակցի իր սեփական արժանապատվությունը, քանի որ, լինելով անծանոթ իր սեփական մարդկային արժանապատվությանը, նա հեռու է ուրիշների մեջ այն հարգելուց: Կարևոր առանձնահատկություններից մեկն է նաև մարդու մեջ կամքի, մտքի և զգազմունքի հավասարակշռումը:

Օգտագործել այդ ընդունակությունները, հաշվի առնելով նրանց առանձնահատկությունները, նշանակում է երեխային հնարավորություն տալ իր մեջ մշտատես կենսատու ուժերի աղբյուր, որը հրտագայում դառնում է երևակայության և ստեղծագործության անսպառ շտեմարան, որ մարդը ներկայանա ամբողջական, ազատ կամքով և իր մեջ դաստիարակի ազնվական հոգի:

Երևում է նոր ժամանակների մարդ, հումանիստական հայացքների կողմանկից, և նա ի վիճակի չէ ցավ ու տառապանք պատճառել ուրիշներին: Սակայն ապրելով կյանքի դառնություններ և հիասթափություններ, գալիս է այն եզրահանգմանը, որ արդարության համար պայքարում ստիպված կլինի ուժի դիմել,որովհետև տեսնում է միայն դավաճանություն և նենգություն, ապշում. «Ինչպե՞ս կարելի է ապրել ժպիտով և չարագործություն անել ժպտալով...», չէ որ մարդը արժևորվում է անձնական որակներով, այլ ոչ թե զբաղեցրած դիրքով: Մենախոսությունները բացահայտում են ներքին պայքարը, որը նա տանում է ինքն իր հետ: Նա միշտ մեղադրում է իր անգործությունը, փորձելով հասկանալ պատրաստ է նա արդյոք ցանկացած գործողության: ՈՒԺը ոչ թե նրանում է, թե ինչ գործեր է անում, այլ թե ինչ է նա զգում և ստիպում վերապրել կարդացողին:

Գրական սեռի առումով էլ ունի իր առավելությունը՝ լուծելու մեր առջև դրված խնդիրը, չէ որ խաղը, և հատկապես բեմական խաղը, ուղղված են զուտ բնավորությունների արտահայտմանը, որոնք մենք այնքան հեշտ ենք տեսնում ուրիշների մեջ և բնավ չենք նկատում մեզանում, «մի հայելի պահել բնության առաջ. ցույց տալ առաքինության իր սեփական դեմքը, մոլության իր պատկերը, և ժամանակի դեմքին ու մարմնին՝ իր տեսքն ու տիպը», իսկ թատրոնը և դերասանները «ժամանակի խտացում և համառոտ տարերգությունը»: Այս լայն և խոր ընդգրկումն է նկատի ունեցել Պուշկինը,երբ գրել է. «Ի՞նչն է զարգանում ողբերգության մեջ, ո՞րն է նրա նպատակը, մարդը և ժողովուրդը: Մարդկային ճակատագրերը, ժողովրդի ճակատագիրը»: Կերպարներն իրենց վարմունքի շարժառիթները ստանում են ոչ թե անհատական ճղճիմ բաղձանքներից, այլ այն պատմական հոսանքից, որ հանդիսանում է նրանց կրողը: Տեսանելի է մարդը իր բոլոր կողմերով. «Ինչ հրաշակերտ է մարդը: Որչափ ազնիվ է նրա դատողությունը: Որչափ անսահման են նրա ընդունակությունները: Կազմվածքն հիանալի, կացունիստով կարծես մի հրեշտակ, խոհականությամբ՝ մի աստված, աշխարհի գեղեցկությունը, կենդանիների կատարելատիպը»: Բայց իրականության մեջ մարդը հաճախ այն չէ, ինչ որ թվում է. «...մարդ կարող է ժպտալ, և՛ ժպտալ, և՛ սրիկա լինել, բայց աստված մարդկանց մի երես է տվել, իսկ նրանք իրենց համար մի այլ երես են շինում, «օրորվում», «շորորվում», «լեզուներ ծռում», իրենց «լկտիությանը» անգետության երևույթ տալիս».

Լինել,թե չլինել, այս է խնդիրը,

Ո՞րն է հոգեպես ավելի ազնիվ,

Տանել գոռ բախտի պարսաքարերը և սլաքները,

Թե զենք վերցնել ցավ ու վշտերի մի ծովի ընդդեմ,

Եվ դիմադրելով վերջ տալ բոլորին:

...Ի՞նչ բան է մարդը. եթե իր կյանքի գլխավոր շահը և փոխարժեքը միմիայն ուտել և քնել լինի: Անասուն միայն, ոչինչ ավելի:

Եվ բացում է մարդու՝ որպես բանական էակի կարևոր առաքելությունը, որ ապրելով պետք է միշտ. «Այս կա անելու», քանզի կա պատճառ, կամք, ուժ, միջոց և օրինակներ: Եվ մարդն ինքն իր հետ ներքին զրույց է վարում, կարևորը այդ զրույցին ճիշտ ընթացք տալն է: Առավել և՛ս, երբ մարդը որպես կանոն ավելի շատ ինքն իր հետ է լինում: Մարդը պետք է կարողանա լինել ճշմարիտ ինքնահաստատման հարցում, թույլ չտա զիջումներ ինքն իր հանդեպ: Սխալի կամ անհաջողության դեպքում պատճառը փնտրել իր մեջ: Չկա ավելի անտանելի բան մարդու համար, քան լինել հանգիստ, անտարբեր, անկիրք, անգործ, չունենալ հրապուրանք, չունենալ սեփական ուժերը գործելու մղում:

Մարդը ոչինչ է անսահմանության մեջ:

Մարդը ամեն ինչ է ոչնչության կողքին:

Մարդը ամեն ինչի ու ոչնչության մեջտեղումն է:

Ավելի պարզորոշ.

Մարդը մեծագույն հանելուկն է տիեզերքի:

Ուրիշին լավ ճանաչել՝ նշանակում է ինքն իրեն լավ ճանաչել:

...Եվ այս մի քանի սկզբունքները հիշողությանդ մեջ

Տես, լավ փորագրես: Լեզու մի շռայլիր ամեն մի մտքիդ,

Եվ ոչ էլ ամեն տհաս խորհրդի՝ գործադրության.

Մարդամոտ եղիր, բայց ոչ գռեհիկ,

Բարեկամներիդ, որ ընտրած լինես և փորձի դրած,

Պողպատ օղերով պրկիր հոգուդ հետ.

Բայց ձեռքիդ ափը մի՛ կոշտացնիր՝պատվասիրելով

Նոր ձվից ելած և դեռ անփետուր ամեն ընկերի:

Զգույշ կաց կռվից, բայց երբ մեջ մտար,

Այնպես տար գործը, որ զգուշանա ոսոխդ քեզնից:

Ականջդ՝ամենքին, ձայնդ քչերին.

Ա՛ռ ամեն մարդուց նրա կարծիքը,

Դատողությունդ քեզ համար պահիր:

Թանկ զգեստ հագիր, որքան քսակդ կարող է զորել.

Բայց ոչ սեթևեթ, ճոխ, ոչ զարդարուն,

Քանզի զգեստը հայտնում է հաճախ, թե ինչ է մարդը.

Ո՛չ պարտք առ, ո՛չ տուր, քանզի շատ անգամ փոխատվությունը

Թ՛ե դրամն է կորցնում, թ՛ե բարեկամին.

Փոխառությունն էլ բթացնում է խնայողությունը:

Այս ամենից վեր, միշտ անկեղծ եղիր դու ինքդ քեզ հետ,

Եվ կհետևի այս բանին, ինչպես տիվը գիշերին,

Որ ոչ ոքի հետ չես կարող կեղծել: Դե՛, գնաս բարով,

Եվ օհնությունս թող սրանք քո մեջ արգասավորե:

Լեզուն արտակարգ ճոխ է ու պատկերավոր, համեմատություններն ու մակդիրները շատ դիպուկ են ու բնութագրական: Թե՛ երկխոսությունների և թե՛ բազմիցս հանդիպող մենախոսությունների մեջ կա հռետորական արվեստին բնորոշ ճարտասանական միջոցներ: Ոճական ամբողջությամբ ևս կատարյալ է: Իմաստախոսություններով հագեցած է գրեթե բոլոր հերոսների խոսքը: Այս ամենը հաշվի առնելով՝ կդառնա խթանիչ ուժ՝ հարստացնելու բառապաշարը գեղարվեստական խոսքի նրբերանգներով՝ օգտագործելու բանավոր և գրավոր խոսքում:

Այստիսով, զգացմունքային և մտային ներդաշնակություն, ազատությունը՝ որպես համամարդկային իդեալ, մտածողությունը՝ որպես անհրաժեշտը և հավերժը հավասարակշռող միջոց, իսկ հոգու ներքին ազնվականությունը՝ որպես անկենդանին ազատություն պարգևող ինքնուրույնության կնիք, խաղը՝ որպես հոգու առաջին և մշտական ուղեկից, համամարդկային արժեքների ընկալումը, գիտակցելը և կրելը գերագույն նպատակ:

«Շեքսպիրը համաշխարհային գրականության արևն է, որի լույսն ու ջերմությունը արդեն հիգերորդ հարյուրամյակն է, ինչ ուղեկցում են մարդկությանը: Առանց նրա անհնար է պատկերացնել համաշխարհային գրական միտքը»:

Հովհ. Թումանյան

Հետևելով վերոնշյալ կառուցվածքին՝ ներկայացնում ենք Վ.Շեքսպիրին՝ տալով ընդհանուր պատկերացում մեծ անգլիացու մասին:

Անգլիացի դրամատուրգ, բանաստեղծ Վ.Շեքսպիրը համաշխարհային գրականության ամենախոշոր ներկայացուցիչն է: Նրա գրական հարուստ ժառանգությունն էլ ուշ Վերածննդի եվրոպական դրամատուրգիայի գագաթն է: Շեքսպիրը մի ամբողջ գեղարվեստական տիեզերքի ստեղծողն է, նա տիրապետում է անհամեմատելի երևակայության և գիտելիքների, ուստի նրա յուրաքանչյուր գործի վերլուծություն հետաքրքիր է և ուսանելի:

«Շեքսպիրը դարձել է մի չափ ազգերի զարգացման աստիճանը որոշելու համար: Եթե մի ժողովուրդ նրան չի թարգմանում կնշանակի տգետ է, եթե չի հասկանում, կնշանակի տհաս է, եթե մի լեզու նրա վրա չի գալիս, կնշանակի տկար է»:

Հովհաննես Թումանյան

Շեքսպիրի ստեղծագործությունները թարգմանվել են հայերեն և ունեն հրաշալի հնչողություն, կարելի է ասել, որ ամենևին էլ «ապակու տակ դրված վարդի» նման չեն և ունեն Իրենց հայկական անզուգական բույրը: /հայ թարգմանիչ Հ.Մասեհյան/ 1965թ. ՀԳԱԱ-ի արվեստի ինստիտուտում հիմնվել է Շեքսպիրագիտական կենտրոն: «Շեքսպիրական» մատենաշարի յոթ հատորներ են լույս տեսել:

Հավելենք, որ «Համլետ» ողբերգության թեման Շեքսպիրը փոխառել է XII դարի իսլանդական մատենագրերից:

Հաջորդ քայլը ծանոթանում ենք «Համլետ» ողբերգության դիպաշարին, նշում հիմնական գաղափարները, որոնց անդրադառնալու ենք գրքի հատվածը մեկնելիս: Նշում ենք համամարդկային գաղափարները, որոնք բարոյական արժեքներ են: Ներկայացնում ենք դրանք՝

- ազնվություն

- հոգու մաքրություն

- ընկերասիրություն

- մարդասիրություն

-չարություն բարի լինելու համար

- արդարություն

- առաքինություն

-խոհեմություն

Այս ամենի հետ անդրադառնում ենք և այլ ենթաշերտերի, քանի որ նշվածները հիմնավորելու և գրագետ վերլուծելու համար հարկ է, անշուշտ, անդրադառնալ մարդկային մերժելի հատկություններին՝

- չարագործությանը

- դավաճանությանը

- անարժանությանը

- ուրացությանը

- կեղծավորությանը

- դավադրությանը ...

Եվ այս հակադրությունների արդյունքում հասնել մի գաղափարի, որի շուրջն էլ պետք է հարթել գլխավոր հերոսի հոգևոր տառապանքից ազատագրվելու ուղին՝ վրեժխնդրության ուղին:

Քայլ առ քայլ հանգեցնել վերլուծությունները ապաշխարության գաղափարին: Պետք է հայտարարել բոլոր ժամանակների մարդկային համընդհանուր ողբերգությունը. «Դարը փշրված է, և ամենավատը, որ ես ծնվել եմ այն վերականգնելու համար»:

Նշում ենք, որ գրողը ներկայացնում է հին Դանիան, ակայն պարզից էլ պարզ է, որ տեսնում ենք նոր Անգլիան:

Վիտենբերգի համալսարանի ուսանողը մարմնավորում է մեծ ողբերգակին, երևան հանում վերջինիս գերմարդկային խնդիրը՝

ընդունել - հառաչել իրականության համար

մեռնել - իր համար լուծել բոլոր խնդիրները

պայքարել – ամբողջ աշխարհի դեմ;

Նրա գերագույն առաքելությունը բարոյական աշխարհի վերականգնումն է:

Կերպարի վերլուծության յուրաքանչյուր քայլով փորձ ենք անում հասկանալու, որ իշխանության համար պայքարի թեման եղել է, կա և գուցե կլինի միշտ, եթե բարոյական նորմերի հիմքերը մնան խախուտ, եթե հասարակության մեջ չաճի նոր սերունդը, որը կարող է փոխել աշխարհը դեպի լավը: Ողջամտորեն լավ ու արդար մարդիկ կլինեն դրանք նոր Համլետները, Դոն Կիխոտները, Ֆաուստները, Փոք Միերները թե այլ հավերժական կերպարներն են, որ ի զորու են լուծելու ընչաքաղցության, գահասիրության, աթոռասիրության բարդույթը. ժողովուրդը պիտի ունենա գրագետ, ազգասեր խոհեմ ղեկավար՝ մարդ: Մարդ, պարկեշտ մարդ, որը բոլորից կվերցնի ամեն մի կարծիք և դատողությունն արդեն իրեն կպահի, կապրի իր աշխարհի հարցերով՝ մնալով ճշմարտության, բարու, ազնիվի, արդարի պաշտպան և չար գաճաճներին կտանի կործանում:

Անպայման անրադառնում ենք «համլետիզմ» հասկացությանը, նշում, որ այն մարդու առանձնահատկություն է հակասությունների վիճակում, երբ պետք է փոքր-

ինչ դանդաղել ոչ միայն համոզվելու մեղքի համար, այլև համոզելու: Դրանով իսկ գնալ այն քայլին, որ կոչվում է վրեժխնդրություն:

Պայքարի և վրեժխնդրության մասին խոսելիս կարևորում ենք այս երևույթների բազմակողմանի վերլուծությունը:

Սպանությունների, մահերի շարքը հաստատում է այն պարզ ճշմարտությունը, որը չարի դեմ պայքարող ազնիվ և արդար ուժն անպայման պիտի հաղթի, հաստատի իր «լինելը»:

Համլետի կերպարի վերլուծության կարևորագույն հատկանիշներից է ընկերասիրությունը:

Հավատարիմ և իսկական ընկերոջ և ընկերասիրության գաղափարը ևս կարևորվում է: Այս գաղափարի միասին խոսելիս հիշատակվում է Դամոնի մասին: Հանձնարարված համանուն պատմությունն ենք ներկայացնում, և՛ Համլետի, և՛ Հորացիոյի ընկերությանը զուգահեռ տանելով Դամոն և Պիթիասի ընկերության պատմությունը:

Ամփոփում ենք, որ Դամոնն և Պիթիասը իսկական ընկերությունն են խորհրդանշում և դարձել են գաղափարակիր արտահայտություն:

Համլետը բոլորիս համար խիստ իրական, կենդանի մարդ է, մեծ զգայունությամբ օժտված տաքարյուն մարդ: Նրան կարելի է համարել կատարյալ մարդ, քանի որ իր ամեն արարքի մեջ ասպետական վեհությամբ հիմնավորում է , համոզում մեզ, որ վշտի ծանր գիտակցությամբ գտնում է իր առաքելության լուծումները:

Հատվածի մեր ուսումնասիրությունը, կերպարի վերլուծությունն ուղղորդվում են համանուն ֆիլմի հայերեն թարգմանությամբ համապատասխան հատվածների դիտումներով, /նրանք պիտի ողջ ֆիլմն էլ դիտեն/, ինչպես նաև ուշադրություն ենք դարձնում անզուգական խոսքին, շեշտադրությանը:

Վերլուծության ընթացքում հիշատակում ենք հատվածում գործող բոլոր հերոսներին: Փորձ ենք անում յուրաքանչյուրին բնորոշել՝ ըստ բնութագրումների և արարքերի: Հատկապես զգացմունքային է մոր և որդու դրվագը, ուր կան հետաքրքիր շերտեր:

«Ընկեր» կոչվող երիտասարդների՝ Ռոզենկրանցի և Գիլդենշտերնի կեղծավոր կերպարները:

Եվ, իհարկե, Օֆելյայի հոր՝ Պոլոնիուսի կերպարը, որի մեկնությունները, դատողությունները ևս ունեն փիլիսոփայական խորք:

Ձեռնագնդակի նման միմյանց տալիս ենք բառերի բացատրությունները, հոմանիշային շարքերը:

Անպայման տալիս ենք մեկնություններ հատվածի վերջում ընտրված ասույթներին, ընտրում ամենատպավորիչը:

Այս դեպքում զատեցինք.

«Թող անգութ լինեմ հենց միայն բարի լինելու համար»:

Ասում ենք նաև.

3 բան, որ սովորեցինք

2-ը, որ կարևորեցինք

1-ը, որ վաղը կկիրառենք:

Որպես ավարտ կայացնում ենք լավատեսական մի եզրահանգում, որ հնարավոր է հավատալ սիրուն և բարեկամությանը, մարդու խոհեմությանն ու բարու հաղթանակին, հնարավոր է ոչնչացնել չարը և հնարավոր է երջանիկ լինել:

Դասի ավարտին հնչեցնում ենք.

«**Մի՛ վախեցեք հրաժարվել լավից՝ հանուն լավագույնի**»:

Գրականություն

1. Շեքսպիր, Ողբերգություններ, Երևան, 1975թ.

2. Մամիկոնյան Հ., Արտասահմանյան գրականության պատմություն, Եր. 1961թ.

3. Մատինյան Կ. Ռ., Ջրբաշյան Ա. Է., Համաշխարհային գրականություն, առաջին մաս.- Եր., «Լույս», 1995թ.